



**ԼԵՈՆԱՅԻՆ ԴԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ ԱԿՏԵՐԻ
ՏԵՂԵԿԱԳԻՐ**

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԱՍԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ N 01(165) «23» հունվարի 2019թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

	ԵՐԿՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԼՂՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՍՐՑԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԾՈՂՈՎԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	
01	«Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար վճարողների 2019 թվականի անվանական կազմը և կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերը հաստատելու մասին» ԼՂՀ հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի N 70-Ն որոշումը	
	ԵՐՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԼՂՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ	
02	«Բանկի և ոչ ռեզիդենտների հետ ֆինանսական դիրքերի և դրանց հետ կապված գործառնությունների վերաբերյալ» Ձև N18 (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» ԼՂՀ Վիճակագրության պետական խորհրդի N 16-Ն որոշումը	
	ՀԻՆԳԵՐՈՐԴ ԲԱԺԻՆ	
	ԼՂՀ ՆԱԽԱՐԱՐՆԵՐԻ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐԸ	
03	«Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարի 2018 թվականի հունիսի 25-ի N 52-Ն հրամանում լրացումներ կատարելու մասին» ԱՀ բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարի N 159Ն հրամանը	
04	««Արցախանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից մատուցվող բնափայտի վերամշակման ծառայությունների գները հաստատելու մասին» ԱՀ բնապահպանության և բնական ռեսուրսների նախարարի N 160Ն հրամանը	
05	«Շուկայի և սպառողների շահերի պաշտպանության պետական տեսչության պետի կողմից արձակվող կարգադրագրերի ձևերը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապե-	

	տության տնտեսական զարգացման նախարարի 2010 թվականի հոկտեմբերի 19-ի N 1-2/88-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարի N 16-Ն հրամանը	
06	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 2014 թվականի փետրվարի 17-ի N 5-Ն հրամանում փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ ֆինանսների նախարարի N 446-Ն հրամանը	
07	«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության 2011 թվականի ապրիլի 4-ի N 3-Ն հրամանում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ԱՀ ֆինանսների նախարարի N 2-Ն հրամանը	
	ՀԱՏՈՒԿ ԲԱԺԻՆ	
	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի որոշումներում փոփոխություններ կատարելու և լիցենզիայի թույլտվության գործողությունը դադարեցնելու մասին որոշումների պատճենները	
	ԱՀ առողջապահության նախարարի կողմից տրված լիցենզիան ուժը կորցրած ճանաչելու և լիցենզիա տրամադրելու մասին տեղեկություններ	
	ԱՀ էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության կողմից դեկտեմբեր ամսում տրամադրված, դադարեցված և կասեցված լիցենզիաների մասին տեղեկություններ	
	ԱՀ քաղաքաշինության նախարարության կողմից դեկտեմբեր ամսում տրամադրված, դադարեցված և կասեցված լիցենզիաների մասին տեղեկություններ	

Գրանցված է
Արցախի Հանրապետության
արդարադատության նախարարության
կողմից 2019 թվականի հունվարի 8-ին
պետական գրանցման համարը 3031901

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» դեկտեմբերի 2018թ.

N 70-Ն

ք. Ստեփանակերտ

**ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ
ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ
ԴՐՈՒՅՔԱԶՄՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածին և 8-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Հաստատել հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար վճարողների 2019 թվականի անվանական կազմը և կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, իսկ դրա գործողությունը տարածվում է 2019 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

ՆԱԽԱԳԱՀ

Հ. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Հավելված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N 70-Ն որոշման

ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿԱԶՄԸ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԴՐՈՒՅՔԱԶՍՓԵՐԸ

(հազ. դրամ)

Հ/Հ	Իրացման շրջանառություն (առանց ԱԱՀ) 2019թ.	Տեսակարար կշիռը	Յուրաքանչյուր ընկերության կարգավորման պարտադիր վճարի տարեկան դրույթաչափը	Որից՝ ըստ եռամսյակների				
				I	II	III	IV	
	ԷԼԵԿՏՐՈՒԷՆԵՐԳԵՏԻԿ ՀԱՄԱԿԱՐԳ (Ընդամենը)	28 728 559,9	0,7	143 328,6	35 832,5	35 832,5	35 832,5	35 831,1
1	«ԱՐՑԱԽԷՆԵՐԳՈ» ՓԲԸ	18 665 405,0	0,463827	93 122,9	23 280,7	23 280,7	23 280,7	23 280,8
2	«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԲԸ	4 275 000,0	0,106232	21 328,3	5 332,1	5 332,1	5 332,1	5 332,0
3	«ԻԶՈՏՈՂ ԴԵԼՏԱ» ՍՊԸ	290 000,0	0,007206	1 446,8	361,7	361,7	361,7	361,7
4	«ՊՐՈՏՈՆ» ՓԲԸ	315 000,0	0,007828	1 571,6	392,9	392,9	392,9	392,9
5	«ՆԵՏՏԻՆՈ» ՓԲԸ	295 000,0	0,007331	1 471,8	368,0	368,0	368,0	367,8
6	«ԱԼՖԱՄԱԳ» ՓԲԸ	200 000,0	0,004970	997,8	249,5	249,5	249,5	249,3
7	«ԻՄԱՍՍ» ՍՊԸ	218 698,5	0,005435	1 091,1	272,8	272,8	272,8	272,7
8	«ԶՈՒՐ-ԷՆԵՐԳԻԱ» ՍՊԸ	613 550,0	0,015246	3 061,0	765,3	765,3	765,3	765,1
9	«ՄԵԳԱՏՈՆ» ՓԲԸ	170 000,0	0,004224	848,1	212,0	212,0	212,0	212,1
10	«ԾՈՎԻՆԱՐ-ՆԱՐԵԿ» ՍՊԸ	6 000,0	0,000149	29,9	7,5	7,5	7,5	7,4
11	«ՎԻԿԻԼԳ» ՍՊԸ	200 000,0	0,004970	997,8	249,5	249,5	249,5	249,3
12	«ՎԻՄԱՎՏ» ՍՊԸ	1 266 300,0	0,031467	6 317,7	1 579,4	1 579,4	1 579,4	1 579,5
13	«ԿԱՐՀԱՍ» ՍՊԸ	383 217,3	0,009523	1 911,9	478,0	478,0	478,0	477,9
14	«ՀԻՄՆԱՔԱՐ» ՓԲԸ	61 863,0	0,001537	308,6	77,2	77,2	77,2	77,0
15	«ԹԱՐԹԱՌ ԷՆԵՐԶԻ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ	1 150 000,0	0,028577	5 737,4	1 434,4	1 434,4	1 434,4	1 434,2

16	«ԼԵՎ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ	618 526,1	0,015370	3 085,9	771,5	771,5	771,5	771,4
	ԳԱԶԱՄԱՍՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ (Ընդամենը)	5 052 511,6	0,125553	25 207,3	6 301,8	6 301,8	6 301,8	6 301,9
17	«ԱՐՑԱԽԳԱԶ» ՓԲԸ	5 052 511,6	0,125553	25 207,3	6 301,8	6 301,8	6 301,8	6 301,9
	ԶԵՐՄԱՄԱՍՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ (Ընդամենը)	198 972,9	0,004944	992,7	248,4	248,4	248,4	247,5
18	«ԶԵՐՄԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ	198 972,9	0,004944	992,7	248,4	248,4	248,4	247,5
	ԶՐԱՄԱՍՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ (Ընդամենը)	369 500,0	0,009182	1 843,5	460,8	460,8	460,8	461,1
19	«ԶՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՓԲԸ	30 000,0	0,000745	149,7	37,4	37,4	37,4	37,5
20	«ԶՐՄՈՒՂ-ԿՈՅՈՒՂԻ» ՓԲԸ	320 000,0	0,007952	1 596,5	399,1	399,1	399,1	399,2
21	«ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՓԲԸ	19 500,0	0,000485	97,3	24,3	24,3	24,3	24,4
	ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ (Ընդամենը)	5 758 125,3	0,143087	28 727,7	7 181,9	7 181,9	7 181,9	7 182,0
22	«ՂԱՐԱԲԱՂ ՏԵԼԵԿՈՄ» ՓԲԸ	5 758 125,3	0,143087	28 727,7	7 181,9	7 181,9	7 181,9	7 182,0
	ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊ (Ընդամենը)	24 500,0	0,000609	122,2	30,6	30,6	30,6	30,4
23	«ԱՐՑԱԽՓՈՍ» ՓԲԸ	24 500,0	0,000609	122,2	30,6	30,6	30,6	30,4
	ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՐԱՏՈՐՈՇՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԱՐՏԱԴԻՐ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԶՆՆՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՅՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՅՄԱՆ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ (Ընդամենը)	110 000,0	0,002733	548,8	137,2	137,2	137,2	137,2
24	«ՏԵԽՆՈ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ	110 000,0	0,002733	548,8	137,2	137,2	137,2	137,2
	ԸՆԴՀԱՆՈՒՐԸ	40 242 169,7	1,0	200 770,8	50 193,2	50 193,2	50 193,2	50 191,2

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ
 ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ
 ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ

Հ. ԹՈՐՈՍՅԱՆ

Գրանցված է
Արցախի Հանրապետության
արդարադատության նախարարության
կողմից 2019 թվականի հունվարի 23-ին
Պետական գրանցման համարը 3011905

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 դեկտեմբերի 2018 թվական

N 16 -Ն

ք.Ստեփանակերտ

**«ԲԱՆԿԻ ԵՎ ՈՉ ՌԵԶԻԴԵՆՏՆԵՐԻ ՀԵՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴԻՐՔԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ
ՀԵՏ ԿԱՊԿԱՍԾ ԳՈՐԾԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼԷ ՁԵՎ N18
(ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ) ՊԵՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՁԵՎԸ ԵՎ ԼՐԱՑՄԱՆ ՀՐԱՀԱՆԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Պետական վիճակագրության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի «ե» կետով՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Վիճակագրության պետական խորհուրդը **ա ղ ղ ու մ է.**

1. *Հաստատել* «Բանկի և ոչ ռեզիդենտների հետ ֆինանսական դիրքերի և դրանց հետ կապված գործառնությունների վերաբերյալ» Ձև N 18 (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության ձևը՝ համաձայն հավելված 1-ի:

2. *Հաստատել* «Բանկի և ոչ ռեզիդենտների հետ ֆինանսական դիրքերի և դրանց հետ կապված գործառնությունների վերաբերյալ» Ձև N 18 (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության ձևի լրացման հրահանգը՝ համաձայն հավելված 2-ի:

ՆԱԽԱԳԱՀ

Մ.ՄԻՆԱՍՅԱՆ

Հավելված 1
 Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
 Վիճակագրության պետական խորհրդի
 2018 թվականի դեկտեմբերի 28-ի N16-Ն որոշման
ՁԵՎ N 18
 (եռամսյակային)



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ
 ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
 ՊԵՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԲԱՆԿԻ ԵՎ ՈՉ
 ՌԵԶԻԴԵՆՏՆԵՐԻ ՀԵՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴԻՐՔԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏ
 ԿԱՊՎԱԾ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

_____թ. _____
 (եռամսյակ)

Ներկայացվում է համաձայն «Պետական վիճակագրության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2002 թվականի ապրիլի 30-ի ՀՕ-205 օրենքի	
Հաշվետվության ներկայացման ժամկետը՝ մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 25-ը	
Ներկայացնում է _____ <small>(անվանումը և կազմակերպա-իրավական տեսակը)</small>	
Գտնվելու վայրը _____ <small>(փոստային դասիչ)</small>	
Շրջանը _____	
Համայնքը _____	
Փաստացի գործունեության հիմնական տեսակը _____	
Պետական ռեզիտրի գրանցման համարը _____	
Նույնականացման (իդենտիֆիկացիոն) ծածկագիրը _____	
Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) _____	
Հեռախոսահամար(ներ) _____ Էլեկտրոնային փոստ _____	
ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐՎՈՒՄ Է ՕՐԵՆՔՈՎ	
Պետական վիճակագրության մասին օրենսդրության խախտումը վիճակագրական տեղեկություններ տրամադրողների, ինչպես նաև պետական վիճակագրություն իրականացնող մարմնի պաշտոնատար անձանց համար առաջացնում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:	

Անվանումը	Ակտիվ									Պասիվ								
	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	ՌԴ ռուբլի	Ճապոնական իեն	Ֆունտ ստերլինգ	Շվեյցարական ֆրանկ	Իրանական ռիալ	Այլ արտարժույթ	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո	ՌԴ ռուբլի	Ճապոնական իեն	Ֆունտ ստերլինգ	Շվեյցարական ֆրանկ	Իրանական ռիալ	Այլ արտարժույթ
1	Կապիտալի արժեթղթեր,																	
	բացառությամբ ներդրումային հիմնադրամներում փայաբաժինների																	
	Ուղղակի ներդրումներ																	
	շահաբաժիններ																	
	Պորտֆելային ներդրումներ																	
	շահաբաժիններ																	
2	Ներդրումային հիմնադրամներում փայաբաժիններ																	
	Կարճաժամկետ																	
	շահաբաժիններ																	
	Երկարաժամկետ																	
	շահաբաժիններ																	
3	Պարտքային արժեթղթեր																	
	Կարճաժամկետ																	
	հաշվեգրված տոկոսներ																	
	Երկարաժամկետ																	
	հաշվեգրված տոկոսներ																	
4	Կանխիկ արտարժույթ																	
5	Վարկեր, այդ թվում՝ օվերդրաֆուս և վարկային քարտեր																	
	Կարճաժամկետ																	
	հաշվեգրված տոկոսներ																	
	Երկարաժամկետ																	

	հաշվեգրված տոկոսներ																		
6	Ավանդներ																		
	Կարճաժամկետ																		
	հաշվեգրված տոկոսներ																		
	Երկարաժամկետ																		
	հաշվեգրված տոկոսներ																		
7	Ֆինանսական ածանցյալներ																		
	եկամուտներ/ծախսեր																		
8	Ապրանքների, ծառայությունների և աշխատանքների դիմաց կանխավճարներ/հետաձգված վճարներ																		
9	Այլ գործառնությունների դիմաց ստացվելիք/վճարվելիք գումարներ																		

Ղեկավար _____
(Ազգանուն, անուն)

Լրացնող _____
(գլխավոր հաշվապահ կամ այլ լիազորված անձ) *(Ազգանուն, անուն)*

_____ թ.

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
 Ազգային վիճակագրական ծառայության
 աշխատակազմի ղեկավար՝

Լ. Հարությունյան

ՀՐԱՀԱՆԳ

«ԲԱՆԿԻ ԵՎ ՈՉ ՌԵԶԻԴԵՆՏՆԵՐԻ ՀԵՏ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԴԻՐՔԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏ ԿԱՊԿԱՍԾ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ՁԵՎ N 18 ՊԵՏԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն հրահանգը կարգավորում է «Բանկի և ոչ ռեզիդենտների հետ ֆինանսական դիրքերի և դրանց հետ կապված գործառնությունների վերաբերյալ» Ձև N 18 (եռամսյակային) պետական վիճակագրական հաշվետվության (այսուհետ՝ հաշվետվություն) լրացման կարգի հետ կապված հարաբերությունները:

2. Հաշվետվությունը ներկայացվում է «Արցախբանկ» փակ բաժնետիրական ընկերության կողմից, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Վիճակագրության պետական խորհրդի կողմից հաստատված պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագրին համաձայն:

3. Հաշվետվությունը սահմանված ժամկետում չներկայացնելու կամ սահմանված կարգի խախտումով (ոչ արժանահավատ տվյալներ, դրանց ոչ ամբողջականորեն արտացոլում և այլ աղավաղումներ) ներկայացնելու (անկախ ժամկետից) համար հաշվետվությունն ներկայացնողը ենթարկվում է պատասխանատվության՝ օրենքով սահմանված կարգով:

4. Հաշվետվությունը ներկայացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայություն հաշվետվության ձևի վրա նշված ժամկետներում և պարբերականությամբ:

5. Վիճակագրական տեղեկությունների ներկայացման հետ կապված այլ հարցերը կարգավորվում են Արցախի Հանրապետության օրենսդրությամբ:

II. ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

6. Հաշվետվության ցուցանիշները ներկայացվում են ՀՀ դրամով, արտարժույթով (ԱՄՆ դոլար, եվրո, ռուսական ռուբլի, ճապոնական իեն, ֆունտ ստերլինգ, շվեյցարական ֆրանկ, իրանական ռիալ) և այլ արժույթով (բանկային ոսկի):

7. Հաշվետվության մեջ գործիքների ժամկետայնությունը տարանջատվում է հետևյալ ձևով՝ «Կարճաժամկետ» տողում գրանցվում են տվյալներ այն գործիքների վերաբերյալ, որոնց պայմանագրային ժամկետը (վարկերի, ավանդների համար) կամ թողարկման պահին սկզբնական ժամկետայնությունը (արժեթղթերի համար) չի գերազանցում մեկ տարին ներառյալ, իսկ մնացածը գրանցվում է «Երկարաժամկետ» տողում:

8. Բոլոր բաժինները, բացառությամբ «Շահաբաժիններ», «Հաշվեգրված տոկոսներ», «Եկամուտներ/ծախսեր» տողերի, լրացվում են համապատասխան ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ անվանական գումարների (մայր գումարների) և դրանց հետ կապված ստացվելիք/վճարվելիք անվանական տոկոսների հաշվեկշռային մնացորդների հիման վրա:

9. «Շահաբաժիններ» հոդվածի «Ակտիվ» մասում լրացվում են տարեսկզբից աճողական տվյալներ սովորական բաժնետոմսերի գծով հայտարարված (ստացվելիք), արտոնյալ բաժնետոմսերի գծով հաշվեգրված (ստացվելիք) շահաբաժինների, իսկ «Պասիվ» մասում՝ տարեսկզբից աճողական տվյալներ սովորական բաժնետոմսերի մասով հայտարարված (վճարվելիք), արտոնյալ բաժնետոմսերի մասով հաշվեգրված (վճարվելիք) շահաբաժինների վերաբերյալ: Արտոնյալ բաժնետոմսերի գծով

շահաբաժինների չհաշվեգրման դեպքում դրանք հաշվետվությունում արտացոլվում են վճարման ենթակա ճանաչվելու պահին: Եթե շահաբաժինները եռամսյակի ընթացքում փաստացի վճարվել են, դրանք չեն նվազեցվում շահաբաժինների կուտակային գումարից:

10. «Ակտիվ» մասի «Հաշվեգրված տոկոսներ» տողերում լրացվում են ոչ ռեզիդենտներից ձեռք բերված պարտքային արժեթղթերի, նրանց տրամադրված վարկերի և ավանդների գծով հաշվեգրված անվանական տոկոսների, իսկ «Պասիվե մասում» ոչ ռեզիդենտներին վաճառված պարտքային արժեթղթերի, նրանցից ներգրավված վարկերի և ավանդների գծով հաշվեգրված անվանական տոկոսների վերաբերյալ տվյալներ: Տվյալները լրացվում են աճողական կարգով՝ տարեսկզբից մինչև հաշվետու եռամսյակի վերջին օրվա դրությամբ հաշվեգրված տոկոսները՝ անկախ այն բանից, թե պարտքային գործիքը, վարկը կամ ավանդը գործում է, թե ոչ հաշվետու եռամսյակի վերջին օրվա դրությամբ: Ընդ որում, վարկերի և ավանդների դիմաց հաշվեգրված տոկոսները լրացնելիս անհրաժեշտ է տարանջատել դրանք ըստ արժույթների, այսինքն՝ յուրաքանչյուր արժույթով ներգրավված (տրամադրված) ավանդների կամ վարկերի գծով հաշվեգրված տոկոսները անհրաժեշտ է լրացնել համապատասխան արժույթի սյան մեջ, այլ ոչ թե, օրինակ, բոլոր հաշվեգրված ծախսերը (եկամուտները) արտացոլել դրամային սյան մեջ, այն պատճառով, որ տոկոսային եկամուտների հաշվեգրումը կատարվում է ՀՀ դրամով: Այս տողում չեն ներառվում առանձին գործիքների գծով ոչ տոկոսային եկամուտներն ու ծախսերը:

11. Ֆինանսական ածանցյալների գծով «Եկամուտներ/ծախսեր» տողի «Ակտիվ» մասում լրացվում են ոչ ռեզիդենտների հետ կնքված ածանցյալ գործիքների (ֆյուչերս, ֆորվարդ, սվոպ, օպցիոն) իրական արժեքի փոփոխության գծով եկամուտները (ոչ տոկոսային եկամուտներ), ինչպես նաև ածանցյալ գործիքների գծով տոկոսային եկամուտները, իսկ «Պասիվ» մասում՝ ոչ ռեզիդենտների հետ կնքված ածանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխության գծով ծախսերը (ոչ տոկոսային ծախսեր), ինչպես նաև ածանցյալ գործիքների գծով տոկոսային ծախսերը: Ընդ որում, տվյալները կարող են լրացվել համախմբված ձևով ՀՀ դրամով սյան մեջ:

12. Առաջին եռամսյակի հաշվետվությունում անհրաժեշտ է ներկայացնել միայն հաշվետու ժամանակաշրջանի գործիքների գծով շահաբաժինները, հաշվեգրված տոկոսները և օգուտները/կորուստները:

13. «Կապիտալի արժեթղթեր» բաժնի «Ակտիվ» մասում լրացվում են բանկի կողմից որևէ ոչ ռեզիդենտ կազմակերպության բաժնետիրական կապիտալում կատարված ուղղակի և պորտֆելային ներդրումները, իսկ «Պասիվե մասում» բանկի բաժնետիրական կապիտալում ոչ ռեզիդենտների կողմից կատարված ուղղակի և պորտֆելային ներդրումները:

14. Կապիտալի արժեթղթերի հետ կապված գործարքների բաժանումը «Ուղղակի ներդրումների» և «Պորտֆելային ներդրումների»՝ կատարվում է հետևյալ սկզբունքներով.

Ուղղակի (նշանակալից մասնակցություն) համարվում են այն ներդրումները, որոնց գումարը կազմում է ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի 10 և ավելի տոկոսը, իսկ պորտֆելային (ոչ նշանակալից մասնակցություն)՝ այն ներդրումները, որոնց գումարը կազմում է ձայնի իրավունք տվող բաժնետոմսերի մինչև 10 տոկոսը:

Կապիտալի արժեթղթերում ներառվում են նաև արտոնյալ բաժնետոմսերը, որոնք ապահովում են իրավունք ընկերության մնացորդային արժեքի նկատմամբ: Եթե ընկերության արտոնյալ բաժնետոմսերը գտնվում են ոչ ռեզիդենտ ուղղակի ներդրողի մոտ, ապա ներառվում են ուղղակի ներդրումներում, իսկ եթե դրանք գտնվում են ոչ ռեզիդենտ պորտֆելային ներդրողի մոտ, ապա ներառվում են պորտֆելային ներդրումներում:

15. «Ներդրումային հիմնադրամներում փայաբաժիններ» հոդվածը լրացվում է միայն «Ակտիվ» մասում՝ տարեսկզբից աճողական տվյալներ ոչ ռեզիդենտ ներդրումային հիմնադրամներում ունեցած փայաբաժինների դիրքի վերաբերյալ: Այս

բաժինը տարանջատվում է ըստ ժամկետայնության սկզբունքի՝ կարճաժամկետ և երկարաժամկետ: «Շահաբաժիններ» մասում լրացվում են ոչ ռեզիդենտ ներդրումային հիմնադրամներում ունեցած փայբաժինների գծով հայտարարված (ստացվելիք) շահաբաժինների վերաբերյալ տվյալներ ըստ արժույթային բաշխվածքի:

16. «Պարտքային արժեթղթեր» բաժնի «Ակտիվ» մասում լրացվում են ոչ ռեզիդենտների կողմից թողարկված և բանկի կողմից ձեռք բերված ցանկացած տեսակի պարտքային արժեթղթերի և դրանց հետ կապված ստացվելիք տոկոսների վերաբերյալ տվյալներ, իսկ «Պասիվ» մասում՝ հաշվետու բանկի կողմից թողարկված և ոչ ռեզիդենտների կողմից ձեռք բերված պարտքային արժեթղթերի և դրանց հետ կապված վճարվելիք տոկոսների վերաբերյալ տվյալներ: Այս բաժնում ներառվում են պարտատուները, մուրհակները և այլ արժեթղթերը:

17. «Կանխիկ արտարժույթ» բաժնում լրացվում են բանկի կանխիկ արտարժույթային միջոցների վերաբերյալ տվյալներ՝ ներառյալ կանխիկը ճանապարհին:

18. «Վարկեր, այդ թվում՝ օվերդրաֆտ և վարկային քարտեր» բաժնի «Ակտիվ» մասում լրացվում են բանկի կողմից ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի և դրանց հետ կապված ստացվելիք տոկոսների (հաշվեգրված՝ չստացված տոկոսների) հաշվեկշռային անվանական գումարները: «Պասիվ» մասում լրացվում են ոչ ռեզիդենտների կողմից բանկին տրամադրված վարկերի և դրանց հետ կապված վճարվելիք տոկոսների (հաշվեգրված՝ չվճարված տոկոսների) գումարները: Ընդ որում՝ վարկային գծերի և օվերդրաֆտների ծավալները գրանցվում են փաստացի մնացորդի (օգտագործված մասի) չափով: Այս բաժնում պետք է ներառել նաև ռեպո գործառնությունների, ֆակտորինգի և ֆինանսական վարձակալության հետևանքով առաջացած պահանջներն ու պարտավորությունները:

19. «Ավանդներ» բաժինը լրացվում է «Վարկեր, այդ թվում՝ օվերդրաֆտ և վարկային քարտեր» բաժնի լրացման սկզբունքով: «Ավանդներ» բաժնում լրացվում են բանկային հաշիվների, ժամկետային ու ցպահանջ ավանդների, ինչպես նաև թղթակցային «նոտրո» և «լոռո» հաշիվների ու դրանց հետ կապված ստացվելիք (վճարվելիք) տոկոսների վերաբերյալ տվյալները:

20. Ֆինանսական ածանցյալ գործիքները ներառում են ոչ ռեզիդենտների հետ ֆորվարդ, ֆյուչերս, օպցիոն, սվոփ և այլ ածանցյալ գործիքների գուտ դիրքերը, ընդ որում, գործիքի իրական արժեքի բացասական մնացորդն արտացոլվում է «Պասիվ» մասում, իսկ իրական արժեքի դրական մնացորդը՝ «Ակտիվ» մասում:

21. «Ապրանքների, ծառայությունների և կատարված աշխատանքների դիմաց կանխավճարներ և հետաձգված վճարներ» բաժնի «Ակտիվ» մասում լրացվում են ապրանքների, ծառայությունների դիմաց բանկի կողմից տրված կանխավճարները, ինչպես նաև ոչ ռեզիդենտներից ապրանքների կամ ծառայությունների դիմաց ստացվելիք գումարները: «Պասիվ» մասում լրացվում են բանկին ծառայությունների դիմաց տրված կանխավճարների, ինչպես նաև ստացված ապրանքների, ծառայությունների և կատարված աշխատանքների դիմաց ոչ ռեզիդենտներին վճարվելիք գումարների վերաբերյալ: Այս բաժնի «Ակտիվ» մասում լրացվում են նաև բանկի կողմից ոչ ռեզիդենտներին, իսկ «Պասիվ» մասում՝ ոչ ռեզիդենտների կողմից բանկին մատուցված ծառայությունների (փոխանցումներ, հավատարմագրային կառավարում, արժեթղթերի փաթեթի կառավարում, խորհրդատվական ծառայություններ, պահառություն, փոխարկումներ, երաշխիքներ, ակրեդիտիվներ կամ այլ նմանատիպ ծառայություններ), վարկերի սպասարկման վճարների, վարկային գծերի չօգտագործված մասի դիմաց հաշվարկվող եկամուտների/ծախսերի գծով ստացվելիք/վճարվելիք գումարների վերաբերյալ տվյալները: Աշխատավարձի գծով վճարվելիք գումարները ներառվում են «Այլ գործառնությունների դիմաց ստացվելիք/վճարվելիք գումարներ» բաժնում:

22. «Այլ գործառնությունների դիմաց ստացվելիք/վճարվելիք գումարներ» բաժնում լրացվում են այն բոլոր գործառնությունները, որոնք տվյալ բանկն իրականացնում է ոչ

ռեզիդենտների հետ և որոնք չեն հանդիսանում վերը նշված գործառնություններից և ոչ մեկը: Այս բաժնում, մասնավորապես, արտացոլվում են վճարային չեկերի գծով առկա պահանջներն ու պարտավորությունները:

**Լեոնային Ղարաբաղի Հանրապետության
Ազգային վիճակագրական ծառայության
աշխատակազմի ղեկավար՝**

Լ.Հարությունյան

Համաձայնեցված է՝
Արցախի Հանրապետության
ֆինանսների նախարար
Ա. Հարությունյան
«27» դեկտեմբերի 2018 թվական

Գրանցված է
Արցախի Հանրապետության
արդարադատության նախարարության
կողմից 08-ին հունվարի 2019թ.
Պետական գրանցման համարը 1131902

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«27» դեկտեմբերի 2018թ.

N 159 Ն

ք.Ստեփանակերտ

**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՆ
ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՄԻ 25-Ի N 52-Ն
ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝

Հ Ր Ա Մ Ա Ց ՈՒ Մ ԵՄ՝

1. Արցախի Հանրապետության բնապահպանության և բնական
ռեսուրսների նախարարի 2018 թվականի հունիսի 25-ի
«Արցախանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության
կողմից մատուցվող բնափայտի մթերման ծառայությունների գները
հաստատելու մասին N 52-Ն հրամանի հավելվածում կատարել
հետևյալ լրացումները.

1) «ՀՀ դրամ» բառերից հետո լրացնել «(առանց ԱԱՀ)» բառերը.

2) աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ տող.

«

3.	Արտահանման համար վառելափայտի մթերման հատատեղի հատկացում (անտառային ճանապարհների բացում)	5 83 3
----	---	-----------

: »

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական
հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, իսկ հաստատված
առավելագույն գինն ուժի մեջ է մտնում սույն

հրամանի պաշտոնական հրապարակման օրվանից մեկ ամիս
հետո:

Ֆ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Գրանցված է
Արցախի Հանրապետության
արդարադատության նախարարության
կողմից 08-ին հունվարի 2019թ.
Պետական գրանցման համարը 1131903

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«27» դեկտեմբերի 2018թ.

N 160 Ն

ք.Ստեփանակերտ

**«ԱՐՑԱԽԱՆՏԱՌ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԲՆԱՓՍՅՏԻ
ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի ապրիլի 25-ի N 228-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի դեկտեմբերի 25-ի N 712 որոշման 5-րդ կետը՝

Հ Ր Ա Մ Ա Ց ՈՒ Մ ԵՄ՝

1. Հաստատել «Արցախանտառ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից մատուցվող բնափայտի վերամշակման ծառայությունների գները՝ համաձայն հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, իսկ հաստատված առավելագույն գներն ուժի մեջ են մտնում սույն հրամանի պաշտոնական հրապարակման օրվանից մեկ ամիս հետո:

Ֆ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

Համաձայնեցված է՝
Արցախի Հանրապետության
ֆինանսների նախարար
Ա. Հարությունյան
«27» դեկտեմբերի 2018 թվական

Հավելված
Արցախի Հանրապետության
բնապահպանության և բնական
ռեսուրսների նախարարի 2018 թվականի
դեկտեմբերի 27-ի N 160-Ն հրամանի

ԳՆԵՐ

**«ԱՐՑԱԽԱՆՏԱՌ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ ՄԱՏՈՒՑՎՈՂ ԲՆԱՓՈՅՑԻ ՎԵՐԱՄՇԱԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

ՀՀ դրամ

Հ/Հ	Ծառայության անվանումը	Գինը (առանց ԱԱՀ)
1.	Գործափայտի վերամշակման արդյունքում ստացված ոչ կողահան տախտակի մատուցում (խտացված խորանարդ մետր)	
1)	հաճարենու	70 802
2)	հացենու, կաղնու, լորենու	102038
2.	Գործափայտի վերամշակման արդյունքում ստացված կողահան տախտակի մատուցում (խտացված խորանարդ մետր)	
1)	հաճարենու	92 210
2)	հացենու, կաղնու, լորենու	124 934
3)	բոխենու	46 328

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝**

Է. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Գրանցված է
Արցախի Հանրապետության
արդարադատության նախարարության
կողմից 26-ին դեկտեմբերի 2018թ.
Պետական գրանցման համարը 1121887

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«18» դեկտեմբերի 2018թ.

N 16-Ն

ք. Ստեփանակերտ

**ՇՈՒԿԱՅԻ ԵՎ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ
ԱՐՁԱԿՎՈՂ ԿԱՐԳԱԴՐԱԳՐԵՐԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԶԱՐԳԱՅՄԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ
19-Ի N 1-2/88-Ն ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Չափումների միասնականության ապահովման մասին» Արցախի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասը, 20-րդ հոդվածը, «Տեխնիկական կանոնակարգման մասին» Արցախի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասը, 27-րդ հոդվածը և «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 73-րդ հոդվածը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հաստատել շուկայի և սպառողների շահերի պաշտպանության պետական տեսչության պետի կողմից արձակվող՝

1) չափման միջոցների շահագործումն արգելելու մասին կարգադրագրի ձևը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) չափման միջոցների խմբաքանակի իրացումն արգելելու մասին կարգադրագրի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) չափման միջոցների իրացումն արգելելու մասին կարգադրագրի ձևը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) բացահայտված խախտումների և թերությունների վերացման ուղղությամբ կարգադրագրի ձևը՝ համաձայն N 4 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական զարգացման նախարարի 2010 թվականի հոկտեմբերի 19-ի «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական զարգացման նախարարության աշխատակազմի պետական տեսչության կողմից սպառողների շահերի և իրավունքների պաշտպանության բնագավառում

իրականացվող ստուգումների ընթացքում օգտագործվող փաստաթղթերի ձևերը հաստատելու մասին» N 1-2/88-Ն հրամանը:

3. Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և արտադրական ենթակառուցվածքների նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Արմեն Թովմասյանին՝ սույն հրամանն Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել Արցախի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:

Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 1
Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և
արտադրական ենթակառուցվածքների նախարարի
2018 թվականի դեկտեմբերի 18-ի N 16-Ն հրամանի



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՇՈՒԿԱՅԻ ԵՎ
ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՍՉՈՒԹՅՈՒՆ**

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ա Գ Ի Ր Ն ____

« ____ » _____ 20 թվական

ՉԱՓՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄՆ ԱՐԳԵԼԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(տնտեսավարող սուբյեկտի անվանումը)

(ղեկավարի անունը, ազգանունը)

(տնտեսավարող սուբյեկտի գտնվելու վայրը)

Տրված է 20 ____ թվականի _____ « ____ » N ____ ստուգման ակտի հիման վրա:

Պետական չափագիտական վերահսկողության ընթացքում հայտնաբերվել է, որ ստուգված չափման միջոցները`

(չափման միջոցների անվանումը)

չեն անցել ստուգաչափում կամ չափագիտական վկայագրում, կամ դրանց տեսակը հաստատված չէ, կամ դրանք չեն համապատասխանում հաստատված տեսակներին (անհրաժեշտն ընդգծել)

(տրմատիվ փաստաթղթերի անվանումը)

(խախտված կետերը)

«Չափումների միասնականության ապահովման մասին» ԱՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետին և 2-4-րդ մասերին համապատասխան **ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ**

1. **ԱՐԳԵԼԵԼ** սույն կարգադրագրում նշված չափման միջոցների շահագործումը:
2. **ՏԵՂԵԿԱՑՆԵԼ** սույն կարգադրագրի կատարման մասին շուկայի և սպառողների շահերի պաշտպանության պետական տեսչությանը մինչև « ____ » _____ 20 ____ թվականը:

3. **ԺԱՄԿԵՏ ՄԱՀՄԱՆԵԼ** սույն կարգադրագրում նշված խախտումների վերացման համար մինչ «_____» _____ 20__ թվականը:

Սույն կարգադրագիրը չկատարելը, ոչ պատշաճ կատարելը կամ կատարման մասին սահմանված ժամկետում շուկայի և սպառողների շահերի պաշտպանության պետական տեսչությանը գրավոր չտեղեկացնելը համարվում է կարգադրագրի չկատարում, որն առաջացնում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

Սույն կարգադրագրի պատճենը տրամադրված է ԱՀ ֆինանսների նախարարության հարկային ծառայությանը «_____» _____ 20__ թվական:

ՏԵՄՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ _____
(ստորագրություն) (անունը, ազգանունը)

Ստացա կարգադրագրի մեկ օրինակը _____
(անունը, ազգանունը, ստորագրությունը, ամսաթիվը)

**ԱՐՑԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՑԻ
ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Է. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված N 2
Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և
արտադրական ենթակառուցվածքների նախարարի
2018 թվականի դեկտեմբերի 18-ի N 16-Ն հրամանի



**ԱՐՑԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՇՈՒԿԱՅԻ
ԵՎ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՄՉՈՒԹՅՈՒՆ**

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ա Գ Ի Ր Ն ____

« ____ » _____ 20 թվական

ՉԱՓՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԽՄԲԱՔԱՆԱԿԻ ԻՐԱՑՈՒՄՆ ԱՐԳԵԼԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(տնտեսավարող սուբյեկտի անվանումը)

(ղեկավարի անունը, ազգանունը)

(տնտեսավարող սուբյեկտի գտնվելու վայրը)

Տրված է 20 ____ թվականի _____ « ____ » N ____ ստուգման ակտի հիման վրա:

Պետական չափազիտական վերահսկողության ընթացքում հայտնաբերվել է, որ ստուգված չափման միջոցները`

(չափման միջոցների անվանումը, խմբաքանակի չափը)

չեն համապատասխանում չափազիտական կանոններին ու նորմերին`

(նորմատիվ փաստաթղթի անվանումը)

(խախտված կետերը)

«Չափումների միասնականության ապահովման մասին Արցախի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին, 20-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին և 2-4-րդ մասերին համապատասխան **ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ**»

1. **ԱՐԳԵԼԵԼ** սույն կարգադրագրում նշված չափման միջոցների խմբաքանակի իրացումը:

2. **ՏԵՂԵԿԱՑՆԵԼ** սույն կարգադրագրի կատարման մասին շուկայի և սպառողների շահերի պաշտպանության պետական տեսչությանը մինչև « ____ » _____ 20 ____ թվականը:

3. ԺԱՄԿԵՏ ՄԱՀՄԱՆԵԼ սույն կարգադրագրում նշված խախտումների վերացման համար մինչև «_____» _____ 20__թվականը:

Սույն կարգադրագիրը չկատարելը, ոչ պատշաճ կատարելը կամ կատարման մասին սահմանված ժամկետում շուկայի և սպառողների շահերի պաշտպանության պետական տեսչությանը գրավոր չտեղեկացնելը համարվում է կարգադրագրի չկատարում, որն առաջացնում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

Սույն կարգադրագրի պատճենը տրամադրված է ԱՀ ֆինանսների նախարարության հարկային ծառայությանը «_____» _____ 20__ թվական:

ՏԵՄՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ _____
(ստորագրություն) (անունը, ազգանունը)

Ստացա կարգադրագրի մեկ օրինակը _____
(անունը, ազգանունը, ստորագրությունը, ամսաթիվը)

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՑԻ
ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Է. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված N 3
Արցախի Հանրապետության Էկոնոմիկայի և
արտադրական ենթակառուցվածքների նախարարի
2018 թվականի դեկտեմբերի 18-ի N 16-Ն հրամանի



**ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՇՈՒԿԱՅԻ
ԵՎ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՄՉՈՒԹՅՈՒՆ**

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ա Գ Ի Ր Ն ____

« ____ » _____ 20 թվական

ՉԱՓՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄՆ ԱՐԳԵԼԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(տնտեսավարող սուբյեկտի անվանումը)

(ղեկավարի անունը, ազգանունը)

(տնտեսավարող սուբյեկտի գտնվելու վայրը)

Տրված է 20 ____ թվականի _____ « ____ » N ____ ստուգման ակտի հիման վրա:

Պետական չափագիտական վերահսկողության ընթացքում հայտնաբերվել է, որ ստուգված չափման միջոցների

(չափման միջոցների անվանումը)

տեսակը հաստատված չէ կամ չեն համապատասխանում հաստատված տեսակին կամ չեն համապատասխանում չափագիտական կանոններին ու նորմերին (անհրաժեշտն ընդգծել)

(նորմատիվ փաստաթղթերի անվանումը)

(խախտված կետերը)

«Չափումների միասնականության ապահովման մասին» Արցախի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետին և 2-4-րդ մասերին համապատասխան **ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝**

1. **ԱՐԳԵԼԵԼ** սույն կարգադրագրում նշված չափման միջոցների իրացումը մինչև հայտնաբերված խախտումների վերացումը:

2. **ՏԵՂԵԿԱՑՆԵԼ** սույն կարգադրագրի կատարման մասին շուկայի և սպառողների շահերի պաշտպանության պետական տեսչությանը մինչև « ____ » _____ 20 ____ թվականը:

3. **ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼ** սույն կարգադրագրում նշված խախտումների վերացման համար մինչև « _____ » _____ 20__ թվականը:

Սույն կարգադրագիրը չկատարելը, ոչ պատշաճ կատարելը կամ կատարման մասին սահմանված ժամկետում շուկայի և սպառողների շահերի պաշտպանության պետական տեսչությանը գրավոր չտեղեկացնելը համարվում է կարգադրագրի չկատարում, որն առաջացնում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

Սույն կարգադրագրի պատճենը տրամադրված է ԱՀ ֆինանսների նախարարության հարկային ծառայությանը « _____ » _____ 20__ թվական:

ՏԵՄՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ _____
(ստորագրություն) (անունը, ազգանունը)

Ստացա կարգադրագրի մեկ օրինակը _____
(անունը, ազգանունը, ստորագրությունը, ամսաթիվը)

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՑԻ
ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Է. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հավելված N 4
Արցախի Հանրապետության էկոնոմիկայի և
արտադրական ենթակառուցվածքների նախարարի
2018 թվականի դեկտեմբերի 18-ի N 16-Ն հրամանի



**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՇՈՒԿԱՅԻ
ԵՎ ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԵՄՉՈՒԹՅՈՒՆ**

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ա Գ Ի Ր Ն ____

« ____ » _____ 20 թվական

**ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ԽԱՄՏՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ
ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ**

(տնտեսավարող սուբյեկտի անվանումը)

(ղեկավարի անունը, ազգանունը)

(տնտեսավարող սուբյեկտի գտնվելու վայրը)

Տրված է 20 ____ թվականի _____ « ____ » N ____ ստուգման ակտի հիման վրա:

Տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխանության նկատմամբ պետական վերահսկողության ընթացքում բացահայտվել է, որ ստուգված արտադրանքը՝

(արտադրանքի անվանումը)

չի համապատասխանում տեխնիկական կանոնակարգեր պահանջներին՝

(տեխնիկական կանոնակարգերի անվանումը)

(խախտված կետերը)

«Տեխնիկական կանոնակարգման մասին» Արցախի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածին համապատասխան **ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝**

1. **ՎԵՐԱՑՆԵԼ** սույն կարգադրագրում նշված խախտումները և թերությունները:

2. **ՏԵՂԵԿԱՑՆԵԼ** սույն կարգադրագրի կատարման մասին շուկայի և սպառողների շահերի պաշտպանության պետական տեսչությանը մինչև «_____» _____ 20__ թվականը:

3. **ԺԱՄԿԵՏ ՍԱՀՄԱՆԵԼ** սույն կարգադրագրում նշված խախտումների և թերությունների վերացման համար մինչև «_____» _____ 20__ թվականը:

Սույն կարգադրագիրը սահմանված ժամկետում չկատարելը առաջացնում է պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով:

ՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ _____
(ստորագրություն) (անունը, ազգանունը)

Ստացա կարգադրագրի մեկ օրինակը _____
(անունը, ազգանունը, ստորագրությունը, ամսաթիվը)

**ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ
ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Է. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Գրանցված է
Արցախի Հանրապետության
արդարադատության նախարարության
կողմից 26-ին դեկտեմբերի 2018թ.
Պետական գրանցման համարը 1111888

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«20» դեկտեմբերի 2018թ.

N 446-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ
ԱՌԸԼԹԵՐ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ
ՓԵՏՐՎԱՐԻ 17-Ի N 5-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային
Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության պետի 2014 թվականի փետրվարի 17-ի «Վարձու աշխատողի և պայմանագրային եկամուտ ստացող ֆիզիկական անձի անհատական տվյալների գրանցման հայտի, եկամտային հարկի և կուտակային վճարի, տարեկան եկամուտների մասին հաշվարկների, կազմակերպության կողմից որպես հարկային գործակալ եկամտային հարկի պահում (գանձում) և պետական բյուջե վճարում կատարելու պարտավորություն ստանձնելու մասին հայտարարության, կազմակերպության (անհատ ձեռնարկատիրոջ) կողմից ֆիզիկական անձանց հաշվարկված և վճարված եկամուտների, իրականացված նվազեցումների և պահված եկամտային հարկի գումարների, ինչպես նաև գործատուի (վարձու) աշխատողի համար կատարված կուտակային վճարների մասին և Արցախի Հանրապետությունում ոչ ռեզիդենտին վճարած հարկերի մասին տեղեկանքների ու գրանցման հայտի և եկամտային հարկի անձնավորված հաշվարկի ընդունման մասին ստացականների ձևերը սահմանելու մասին» N 5-Ն հրամանով սահմանված N 1 հավելվածի՝

1) 4-րդ բաժնի 1-ին և 2-րդ ենթաբաժինները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ենթաբաժին I. Աշխատանքային հարաբերություններ

Աշխատանքային հարաբերություններ	
Սկիզբ	Ավարտ
4.1.1	4.1.2

Պաշտոն			Աշխատաժամանակի ռեժիմ (նորմալ տևողություն կամ ոչ լրիվ աշխատաժամանակ)	Ոչ լրիվ աշխատաժամանակի դեպքում շաբաթական տևողություն	Համատեղությամբ աշխատանք
Կոդ	Սկիզբ	Ավարտ			
4.1.3	4.1.4	4.1.5	4.1.6	4.1.7	4.1.8

21) 4.1.1 սյունակում լրացվում է գործատուի կողմից վարձու աշխատողի հետ աշխատանքային պայմանագրի կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի հիման վրա աշխատողի աշխատանքի անցնելու ամսաթիվը՝ օր, ամիս, տարի

22) 4.1.2 սյունակում լրացվում է գործատուի կողմից վարձու աշխատողի հետ աշխատանքային հարաբերությունների դադարեցման ամսաթիվը՝ օր, ամիս, տարի

Ֆիզիկական անձ գործատուի մահվան դեպքում վարձու աշխատողի հետ աշխատանքային հարաբերությունների ավարտը գրանցվում է ֆիզիկական անձ գործատուի մահվան օրով՝ հարկային մարմնի կողմից Արցախի Հանրապետության ոստիկանությունից ստացված տվյալների հիման վրա

23) 4.1.3, 4.1.4 և 4.1.5 սյունակներում լրացվում են աշխատողի պաշտոնի (մասնագիտության) կոդը՝ Լեոնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի փետրվարի 12-ի «Աշխատողների մասնագիտությունների, մասնագիտացումների և պաշտոնների Լեոնային Ղարաբաղի Հանրապետության դասակարգիչ ընդունելու մասին» N 19-Ն հրամանի հավելվածի համաձայն, տվյալ պաշտոնի (մասնագիտությամբ աշխատանքի անցնելու) նշանակման և տվյալ պաշտոնից ազատվելու (մասնագիտության փոփոխության) ամսաթվերը (օր, ամիս, տարի): Եթե ֆիզիկական անձին վերաբերող տեղեկատվությունն օրենսդրությամբ սահմանված չէ որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն, ապա հաստիքային զինծառայողի դեպքում լրացվում է համակարգում զինծառայողի և դրան հավասարեցված անձի պաշտոնին տրված կոդը և ծառայության անցնելու ամսաթիվը՝ օր, ամիս, տարի

23.1) 4.1.6 սյունակում լրացվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 139-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 141-րդ հոդվածով սահմանված և աշխատանքային պայմանագրով նախատեսված վարձու աշխատողի աշխատաժամանակի ռեժիմը (նորմալ տևողություն կամ ոչ լրիվ աշխատաժամանակ): Ոչ լրիվ աշխատաժամանակի ռեժիմին չեն վերաբերում այն աշխատողները, որոնց համար, համաձայն գործող օրենսդրության (Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 140-րդ հոդված), սահմանված է աշխատաժամանակի կրճատ տևողություն

23.2) 4.1.7 սյունակում լրացվում է աշխատաժամանակի շարաքական տևողությունը, եթե վարձու աշխատողն աշխատում է ոչ լրիվ աշխատաժամանակի ռեժիմով

23.3) 4.1.8 սյունակը լրացվում է, եթե աշխատանքը կատարվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 99-րդ հոդվածով սահմանված և աշխատանքային պայմանագրով նախատեսված համատեղությամբ

Ենթաբաժին II. Չվճարվող արձակուրդի մասին տեղեկություններ

Չվճարվող արձակուրդ		Մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդ		Երեխայի ծննդյան ամսաթիվ (օր/ամիս/տարի)
Սկիզբ	Ավարտ	Սկիզբ	Ավարտ	
4.2.1	4.2.2	4.2.3	4.2.4	4.2.5

24) 4.2.1 և 4.2.2 սյունակներում լրացվում է գործատուի կողմից վարձու աշխատողին չվճարվող արձակուրդ տրամադրելու սկզբի և ավարտի ամսաթվերը՝ օր, ամիս, տարի

25) 4.2.3 և 4.2.4 սյունակներում արտացոլվում է գործատուի կողմից վարձու աշխատողին մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդ տրամադրելու սկզբի և ավարտի ամսաթվերը՝ օր, ամիս, տարի

26) 4.2.5 սյունակում լրացվում է երեխայի ծննդյան ամսաթիվը՝ օր, ամիս, տարի.

2) 5-րդ բաժնի 1-ին և 2-րդ ենթաբաժինները շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Ենթաբաժին I. Աշխատանքային հարաբերություններ

Աշխատանքային հարաբերություններ	
Սկիզբ	Ավարտ

5.1.1	5.1.2

30) 5.1.1 սյունակում արտացոլվում է գործատուի կողմից վարձու աշխատողի հետ աշխատանքային պայմանագրի կնքման կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի ընդունման՝ նախորդ գրանցման հայտով սխալ հանձնված ամսաթիվը՝ օր, ամիս, տարի

31) 5.1.2 սյունակում արտացոլվում է գործատուի կողմից վարձու աշխատողի հետ աշխատանքային հարաբերությունների դադարեցման՝ նախորդ գրանցման հայտով սխալ հանձնված ամսաթիվը՝ օր, ամիս, տարի

Պաշտոն			Աշխատաժամանակի ռեժիմ (նորմալ տևողություն կամ ոչ լրիվ աշխատաժամանակ)	Ոչ լրիվ աշխատաժամանակի դեպքում շաբաթական տևողություն	Համատեղությամբ աշխատանք
Կոդ	Սկիզբ	Ավարտ			
5.1.3	5.1.4	5.1.5	5.1.6	5.1.7	5.1.8

32) 5.1.3, 5.1.4 և 5.1.5 սյունակներում արտացոլվում են նախորդ գրանցման հայտով սխալ հանձնված աշխատողի պաշտոնի (մասնագիտության) տվյալները

32.1) 5.1.6 սյունակում լրացվում է նախորդ գրանցման հայտով սխալ հանձնված վարձու աշխատողի աշխատաժամանակի ռեժիմը (նորմալ տևողություն կամ ոչ լրիվ աշխատաժամանակ)

32.2) 5.1.7 սյունակում լրացվում է նախորդ գրանցման հայտով սխալ հանձնված աշխատաժամանակի շաբաթական տևողությունը, եթե վարձու աշխատողն աշխատում է ոչ լրիվ աշխատաժամանակի ռեժիմով

32.3) 5.1.8 սյունակում լրացվում է նախորդ գրանցման հայտով սխալ հանձնված՝ համատեղությամբ կատարվող աշխատանքի դաշտում նշված տվյալը

Ենթաբաժին II. Չվճարվող արձակուրդի մասին տեղեկություններ

Չվճարվող արձակուրդ		Մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդ		Երեխայի ծննդյան ամսաթիվ (օր/ամիս/տարի)
Սկիզբ	Ավարտ	Սկիզբ	Ավարտ	
5.2.1	5.2.2	5.2.3	5.2.4	5.2.5

33) 5.2.1 և 5.2.2 սյունակներում արտացոլվում է գործատուի կողմից վարձու աշխատողին չվճարվող արձակուրդ տրամադրելու՝ նախորդ գրանցման հայտով սխալ հանձնված սկզբի և ավարտի ամսաթվերը՝ օր, ամիս, տարի

34) 5.2.3 և 5.2.4 սյունակներում արտացոլվում է գործատուի կողմից վարձու աշխատողին մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդ տրամադրելու՝ նախորդ գրանցման հայտով սխալ հանձնված սկզբի և ավարտի ամսաթվերը՝ օր, ամիս, տարի

35) 5.2.5 սյունակում արտացոլվում է երեխայի ծննդյան՝ նախորդ գրանցման հայտով սխալ հանձնված ամսաթիվը՝ օր, ամիս, տարի»:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Գրանցված է
Արցախի Հանրապետության
արդարադատության նախարարությունում
2019 թվականի հունվարի 23-ին
Պետական գրանցման համարը 1111904

ԱՐՑԱՒԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«08» հունվարի 2019թ.

N 2-Ն

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ
ԱՌԸՆԹԵՐ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ
ԱՊՐԻԼԻ 4-Ի N 3-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության 2011 թվականի ապրիլի 4-ի «Հաստատագրված վճարների հաշվարկման ելակետային տվյալների և ուղղիչ գործակիցների, սահմանային չափի ցուցանիշների մասին հայտարարության, համամասնությունների մասին տեղեկանքի ձևերը և դրանց լրացման կարգերը հաստատելու, հարկային մարմնի մի շարք հրամաններ ուժը կորցրած ճանաչելու մասին N 3-Ն հրամանում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) հրամանի 1-ին կետի 26-րդ ենթակետում, հրամանով հաստատված N 26 հավելվածի հայտարարության ձևում ու լրացման կարգում «հեծանիվների բառերից առաջ լրացնել «մեխանիկական և էլեկտրական մանկական ավտոմեքենաների,» բառերը.

2) հրամանով հաստատված՝

ա. N 1 հավելվածի հայտարարության ձևում և լրացման կարգում «32» թվերը փոխարինել «20» թվերով,

բ. NN 1, 4, 10, 11, 20, 21, 24-26 հավելվածների հայտարարությունների ձևերում վերջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«* Հաստատագրված վճարի չափը հաշվարկելիս Ստեփանակերտ քաղաքում լրացուցիչ կիրառվում է 0,5 գործակից, իսկ այլ վայրերում՝ 0,3 գործակից:».

գ. NN 6, 8, 14, 15, 22 և 23 հավելվածների հայտարարությունների ձևերում վերջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«* Հաստատագրված վճարի չափը հաշվարկելիս (բացառությամբ Ստեփանակերտ քաղաքի) լրացուցիչ կիրառվում է 0,3 գործակից:»,

դ. N 9 հավելվածի հայտարարության ձևում «1.6» թիվը փոխարինել «1,2» թվով և վերջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«* Հաստատագրված վճարի չափը հաշվարկելիս թեթև մարդատար և բեռնատար ավտոմեքենաներով գործունեության իրականացման համար Ստեփանակերտ քաղաքում լրացուցիչ կիրառվում է 0,5 գործակից, իսկ այլ վայրերում՝ ներառյալ ավտոբուսներով և միկրոավտոբուսներով գործունեության իրականացման համար՝ 0,3 գործակից:»,

ե. N 19 հավելվածի հայտարարության ձևի 4-րդ կետում և լրացման կարգում «20» թվերը փոխարինել «10» թվերով,

զ. N 26 հավելվածում հայտարարության ձևի և լրացման կարգի վերնագրերում «ՀԵԾԱՆԻՎՆԵՐԻ» բառերից առաջ լրացնել «ՄԵԽԱՆԻԿԱԿԱՆ ԵՎ ԷԼԵԿՏՐՈՎԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ», բառերը:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» դեկտեմբերի 2018 թվականի

N 73-Ս

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 5-Ի N28 Ա ՈՐՈՇՄԱՄԲ «ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ
ՋՐԱՀԵՌՄԱՑՈՒՄ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱՂԻՎԱԾ ՋՐԱՅԻՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ N 0001 ԹՈՒՑԼՏՎՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆԸ
ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ջրային օրենսգրքի 46-րդ հոդվածը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2008 թվականի ապրիլի 10-ի «Ջրային համակարգի օգտագործման թույլտվության տրամադրման կարգը հաստատելու մասին» թիվ 20Ն որոշումը և հաշվի առնելով «Ջրամատակարարում և ջրահեռացում» փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի նոյեմբերի 12-ի N130 գրությունը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Դադարեցնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2012 թվականի մարտի 5-ի ««Ջրամատակարարում և ջրահեռացում» փակ բաժնետիրական ընկերությանը ջրային համակարգի օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» N 28Ա որոշմամբ «Ջրամատակարարում և ջրահեռացում» փակ բաժնետիրական ընկերությանը տրամադրված ջրային համակարգի օգտագործման N 0001 թույլտվության գործողությունը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «Ջրամատակարարում և ջրահեռացում» փակ բաժնետիրական ընկերությանը հանձնելուն հաջորդող օրվանից:

ՆԱԽԱԳԱՀ

Հ. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» դեկտեմբերի 2018 թվականի

N 74-Ս

ք. Ստեփանակերտ

**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ
5-Ի N 9-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 17-րդ և 24-րդ հոդվածները, «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 25-ի «Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի թիվ 57Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 53-Ն որոշումը և հաշվի առնելով «ԼԵՎ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2018 թվականի փետրվարի 15-ի N 18/004 գրությունը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2018 թվականի մարտի 5-ի «ԼԵՎ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Ադավնո» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 12-ի N 5Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 9-Ա որոշման 2-րդ կետով հաստատված «ԼԵՎ ԷՆԵՐՋԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Ադավնո» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ N 0001 լիցենզիայի պայմանների 4-րդ բաժնի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4. «Ադավնո» փոքր հիդրոէլեկտրակայանի փաստացի տեղակայված հզորությունը 4,525 մեգավատտ է, իսկ էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվում է հետևյալ սարքավորումներով և տեխնիկատնտեսական ցուցանիշներով՝

- 1) ջրառի և ջրահեռացման նիշերն են՝ 1300,0 մետրից - 1148,5 մետր.
- 2) հաշվարկային ելք՝ 4,5 խորանարդ մետր վայրկյանում.
- 3) հաշվարկային ճնշում՝ 127,1 մետր.

4) գեներատոր՝ մեկ հատ, չեխական, 2017 թվականի արտադրության, AEM SEH 710 AH տիպի, 4,525 մեգավատտ հզորությամբ.

- 5) հիդրոտուրբին՝ մեկ հատ, չեխական, 2017 թվականի արտադրության, G125.046/30gL տիպի, 4,835 մեգավատտ հզորությամբ:»:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՆԱԽԱԳԱՀ

Հ. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ՕԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» դեկտեմբերի 2018 թվականի

N 75-Ա

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ՕԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ
26-Ի N 15-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 17-րդ և 24-րդ հոդվածները, «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 25-ի «Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի թիվ 57Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 53-Ն որոշումը և հաշվի առնելով «Հիմնաքար» փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի հունիսի 25-ի N 40 գրությունը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2018 թվականի ապրիլի 26-ի ««Հիմնաքար» փակ բաժնետիրական ընկերությանը «Բերդիկ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» N 15-Ա որոշման 2-րդ կետով հաստատված «Հիմնաքար» փակ բաժնետիրական ընկերության «Բերդիկ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ N 0002 լիցենզիայի պայմանների 5-րդ բաժնի 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. «Բերդիկ» փոքր հիդրոէլեկտրակայանի փաստացի տեղակայված հզորությունը 0,50 մեգավատտ է, իսկ էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվում է հետևյալ սարքավորումներով՝

1) գեներատոր՝ մեկ հատ, հայկական «Խորդա» ընկերության 2018 թվականի արտադրության ՇԴ-2-500 սինքրոն եռաֆազ տիպի, 0,50 մեգավատտ հզորությամբ.

2) հիդրոտուրբին՝ մեկ հատ, հայկական «Խորդա» ընկերության 2018 թվականի արտադրության P-550/310 տիպի, 0,55 մեգավատտ հզորությամբ»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՆԱԽԱԳԱՀ

Հ. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ՍԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«27» դեկտեմբերի 2018 թվականի

N 76-Ս

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ՍԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ
ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ
18-Ի N 27-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 17-րդ և 24-րդ հոդվածները, «Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 25-ի «Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2011 թվականի հունիսի 28-ի թիվ 57Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 53-Ն որոշումը և հաշվի առնելով «Արցախի ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության 2018 թվականի հոկտեմբերի 15-ի N 215 գրությունը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովը **ո ր ո շ ու մ է.**

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրային ծառայությունները և տնտեսական մրցակցությունը կարգավորող պետական հանձնաժողովի 2018 թվականի մայիսի 18-ի ««Արցախի ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերությանը «Թրդի-4» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» N 27-Ա որոշման 2-րդ կետով հաստատված «Արցախի ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերությանը տրամադրված «Թրդի-4» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության ԼԷ N 0003 լիցենզիայի պայմանների 5-րդ բաժնի 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. «Թրդի-4» փոքր հիդրոէլեկտրակայանի փաստացի տեղակայված հզորությունը 0,80 մեգավատտ է, իսկ էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվում է հետևյալ սարքավորումներով՝

1) գեներատորներ՝ երկու հատ, հայկական «Խորդա» ընկերության 2015 թվականի արտադրության, СГ-2-400-10 КУХЛ4 սինքրոն տիպի, յուրաքանչյուրը 0,40 մեգավատտ հզորությամբ, ընդհանուր դրվածքային հզորությունը՝ 0,80 մեգավատտ.

2) հիդրոտուրբիններ՝ երկու հատ, հայկական «Խորդա» ընկերության 2015 թվականի արտադրության, Պելտոն տիպի P-430/215 տուրբիններ,

յուրաքանչյուրը 0,43 մեգավատտ հզորությամբ, ընդհանուր դրվածքային հզորությունը՝ 0,86 մեգավատտ:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՆԱԽԱԳԱՀ

Հ. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

**Ա Ր Ց Ա Խ Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն
Ա Ռ Ո Ղ Ջ Ա Պ Ա Հ ՈՒ Թ Յ Ա Ն Ն Ա Խ Ա Ր Ա Ր**

Հ Ր Ա Մ Ա Ն

«26» դեկտեմբերի 2018թ.

N 324-Ա

ք.Ստեփանակերտ

**«ՔԻՐՍ-ՊԼՅՈՒՍ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐՎԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՈՒՃԸ
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 20-րդ, 21-րդ հոդվածները, 37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը և «Քիրս-պյուս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Արմիդա Մոսիյանի դիմումը

Հ Ր Ա Մ Ա Ց ՈՒ Մ ԵՄ՝

1. Ուժը կորցրած ճանաչել 2016 թվականի հունվարի 22-ին օրթողոնտիկ ստոմատոլոգիական և ընտանեկան ստոմատոլոգիական գործունեության համար «Քիրս-պյուս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրված թիվ Կ-XX-000275 լիցենզիան:

2.Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնի վարիչ Լ.Հովհաննիսյանին՝

1) ապահովել լիցենզիայի դադարեցման մասին տեղեկության գրանցումը համապատասխան գրանցամատյանում.

2) «Քիրս-պյուս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության լիցենզիայի բնօրինակը կցել նրա անհատական գործին.

3) եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը գերատեսչական նորմատիվ ակտերը հրապարակող մարմնին և հայտատուին:

Ա.ԲԱՂՅԱՆ

**ԱՐՑԱԽԻՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«26» դեկտեմբերի 2018թ.

N 325-Ա

ք.Ստեփանակերտ

**«ՕՐԹՈՂԵՆՏ» ՄԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՕՐԹՈՂՈՆՏԻԿ ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ
ՍՏՈՄԱՏՈԼՈԳԻԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ
ԼԻՑԵՆԶԻԱ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Լիցենզավորման մասին» Լեռնային Ղարաբաղի
Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի, 43-րդ հոդվածի 2-րդ մասի
աղյուսակի 3-րդ բաժնի 3-րդ կետի պահանջներով.

Հ Ր Ա Մ Ա Ց ՈՒ Մ Ե Մ

1. «ՕՐԹՈՂԵՆՏ» սահմանափակ պատասխանատվությամբ
ընկերության (հասցե՝ Արցախի Հանրապետություն, քաղաք Ստեփանակերտ,
Ադ. Իսակովի 2/114) հայտը բավարարել և տալ «Օրթոդոնտիկ
ստոմատոլոգիական և ընտանեկան ստոմատոլոգիական» գործունեություն
իրականացնելու համար լիցենզիա:

2. Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության
աշխատակազմի իրավաբանական և լիցենզավորման բաժնի վարիչ
Լ.Հովհաննիսյանին՝

1) ապահովել տրված լիցենզիայի մասին տեղեկության գրանցումը
համապատասխան գրանցամատյանում.

2) եռօրյա ժամկետում ապահովել սույն հրամանի առաքումը
գերատեսչական նորմատիվ ակտերը հրապարակող մարմնին և հայտատուին:

Ա.ԲԱՂՅԱՆ

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՑԻ ԵՎ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄՍՈՒՄ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ, ԴԱԴԱՐԵՑՎԱԾ ԵՎ ԿԱՍԵՑՎԱԾ ԼԻՑԵՆԶԻԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

14.01.2019թ.

h/h	Լիցենզավորված անձի անվանումը կամ անունը, ազգանունը	Լիցենզիայի		Գործունեության		Լիցենզիայի գործողության ժամկետը	Ծանոթություն
		համարը	տրման ամսաթիվը	տեսակը	իրականացման վայրը		
ՏՐԱՄԱԴՐՈՒՄ							
1	ԱԶ Ռոբերտ Միքայելի Բաղդասարյան	ՏՕՆ00693	03.12.2018թ.	Մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպում	ԱՀ	անժամկետ	
2	ԱԶ Ալեքսանդր Վլադիմիրի Սևումյան	ՏՕՆ00694	03.12.2018թ.		ԱՀ	անժամկետ	
3	Արթուր Հրաչիկի Մարտիրոսով (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00695	03.12.2018թ.		ԱՀ	անժամկետ	
4	Արայիկ Հովիկի Ասրյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00696	18.12.2018թ.		ԱՀ	անժամկետ	
5	ԱԶ Էդգար Վալերիի Բաբայան	ՏՕՆ00697	18.12.2018թ.		ԱՀ	անժամկետ	
6	ԱԶ Արմեն Վլադիմիրի Խաչիյան	ՏՕՆ00698	18.12.2018թ.		ԱՀ	անժամկետ	
7	Արթուր Նիկոլայի Գրիգորյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00699	18.12.2018թ.		ԱՀ	անժամկետ	
8	Սեյրան Սամվելի Դադայան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00700	18.12.2018թ.		ԱՀ	անժամկետ	
9	Կարեն Գառնիկի Ավետիսյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00701	27.12.2018թ.		ԱՀ	անժամկետ	
ԴԱԴԱՐԵՑՈՒՄ							
10	ԱԶ Հովիկ Ռաֆայելի Առաքելյան	ՏՕՆ00599	02.03.2018թ.	Մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպում	ԱՀ	անժամկետ	դադարեցվել է 18.12.2018թ.
11	ԱԶ Պյոտր Գրիգորյան	ՏՕՆ00401	23.09.2014թ.		ԱՀ	անժամկետ	դադարեցվել է 27.12.2018թ.
12	Արարատ Նավրուզի Գասպարյան (ֆիզիկական անձ)	ՏՕՆ00586	25.01.2018թ.		ԱՀ	անժամկետ	դադարեցվել է 27.12.2018թ.
ԿԱՍԵՑՈՒՄ							

13	ԱԶ Գավրուշա Ալլահվերդյան	ՏՕՆ00047	23.12.2009թ.	Մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպում	ԱՀ	անժամկետ	կասեցվել է 23.12.2018թ.
14	ԱԶ Վարդան Արզումանյան	ՏՕՆ00051	30.12.2009թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 30.12.2018թ.
15	ԱԶ Կամո Աղաջանյան	ՏՕՆ00156	14.12.2011թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 14.12.2018թ.
16	ԱԶ Գագիկ Ավագյան	ՏՕՆ00339	03.12.2013թ.	Մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպում	ԱՀ	անժամկետ	կասեցվել է 03.12.2018թ.
17	ԱԶ Վիտալիկ Ոսկանյան	ՏՕՆ00340	16.12.2013թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 16.12.2018թ.
18	ԱԶ Ռոբերտ Մկրտչյան	ՏՕՆ00414	19.11.2014թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 19.11.2018թ.
19	ԱԶ Կարո Ազրյան	ՏՕՆ00421	11.12.2014թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 11.12.2018թ.
20	ԱԶ Յուրա Օհանյան	ՏՕՆ00426	18.12.2014թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 18.12.2018թ.
21	ԱԶ Գևորգ Եզանյան	ՏՕՆ00427	24.12.2014թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 24.12.2018թ.
22	ԱԶ Կամո Փաշայան	ՏՕՆ00454	09.12.2015թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 09.12.2018թ.
23	Ենոք Բագրատի Ղահրամանյան (Ֆիզիկական անձ)	ՏՕՆ00517	06.12.2016թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 06.12.2018թ.
24	Կամո Էլդարի Նալբանդյան (Ֆիզիկական անձ)	ՏՕՆ00519	19.12.2016թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 19.12.2018թ.
25	Անդրեյ Արտյոմի Հայրապետյան (Ֆիզիկական անձ)	ՏՕՆ00522	19.12.2016թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 19.12.2018թ.
26	ԱԶ Վաչագան Ծատուրի Աղաջանյան	ՏՕՆ00523	19.12.2016թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 19.12.2018թ.
27	ԱԶ Էրիկ Հարությունյան	ՏՕՆ00583	06.12.2017թ.		ԱՀ	անժամկետ	կասեցվել է 06.12.2018թ.

28	ԱԶ Ռուդիկ Գեորգիի Օհանյան	ՏՕՆ00581	13.10.2017թ.		ԱՀ	անժամկետ	կասեցումը հանվել է 09.12.2018թ.
29	ԱԶ Անդրանիկ Հովհանիսյան	ՏՕՆ00405	29.10.2014թ.		ԱՀ	անժամկետ	կասեցումը հանվել է 07.12.2018թ.
30	Սամսոն Սերգեյի Միմոնյան (Ֆիզիկական անձ)	ՏՕՆ00450	21.10.2015թ.		ԱՀ	անժամկետ	կասեցումը հանվել է 20.12.2018թ.

Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր
2018 թվականի դեկտեմբեր ամսվա համար

ԱՀ քաղաքաշինության նախարարություն

NN	Ֆիզիկական անձանց /անուն, ազգանուն/, բնակության վայրը իրավաբանական անձանց /անվանումը/, գտնվելու վայրը	ՀՎՀՀ	Լիցենզ. համար	Լիցենզ. տալու ամսաթ.	Գործողության տեսակը	Գործուն. իրական. վայրը	Գործող. ժամկետը	Պետական տուրքի առաջին վճարման ամսաթիվը	Ծանոթ.
1	«ՎԵՐԱՆՆԱ» ՍՊԸ ք. Հաղբույժ, Բարեկամության 10	90283443	ՇԻ-1057	06.12.2018	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>	ԼՂՀ տարածքում	Անժամկետ	28.11.2018	
2	«Ս&Ս» ՓԲԸ ք. Ստեփ, Ազատամարտիկների 6	90019492	ՔՓՓ-1058	06.12.2018	Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննություն, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>	ԼՂՀ տարածքում	Անժամկետ	03.12.2018	
3	«ՍՏԲՈՅ ՏԵԽ» ՍՊԸ ք. Ստեփ. Շինարարների փող, տուն 40	90039394	ՔՓՄ-1059	14.12.2018	Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>տրանսպորտային</i>	ԼՂՀ տարածքում	Անժամկետ	05.12.2018	
4	«ՀԻՂԲՈ-ԲԻԼԹ» ՍՊԸ Մարտունու շրջան, գ. Բերդաշեն	90214772	ՇԻ-1060	28.12.2018	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>հիդրոտեխնիկական</i>	ԼՂՀ տարածքում	Անժամկետ	24.12.2018	
5			ՔՓՄ-1061		Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>հիդրոտեխնիկական</i>	ԼՂՀ տարածքում	Անժամկետ		
6	«ՀԱՄԱԼԻՐ» ՍՊԸ ք. Ստեփ, Շինարարների փողոց 52	90042672	ՇԻ-1062	28.12.2018	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>	ԼՂՀ տարածքում	Անժամկետ	24.12.2018	
7	«ԻՄԱՍՍ» ՍՊԸ Քաղաքաշինության նախարարության շրջան, գ. Մոշաթաղ	10003104	ՇԻ-1063	28.12.2018	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>հիդրոտեխնիկական</i>	ԼՂՀ տարածքում	Անժամկետ	26.12.2018	

Տ Ե Ղ Ե Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր
2018 թվականի դեկտեմբեր ամսվա համար

ԱՀ քաղաքաշինության նախարարություն

NN	Լիցենզավորված, թույլտվություն, արտոնագիր ունեցող անձի		Լիցենզիայի սերիան և համարը	Լիցենզավորված գործունեության տեսակը	Լիցենզիայի վերաձևակերպում		Լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգում (եջել երկարաձգված ժամանակահատվածի ավարտման ամսաթիվը)	Լիցենզիայի, թույլտվության արտոնագրի գործողության կասեցում			Վերականգնողականության համար Լիցենզիայի գործունեության վերականգնումը Լիցենզիայի գործունեության վերականգնումը Լիցենզիայի գործունեության վերականգնումը
	Անվանումը	ՀՎՀՀ			Որոշման ամսաթիվը	Նոր ամսաթիվը		կասեցման ամսին որոշման կամ դրա վճիռը	կասեցումը հանելու ամսին	կասեցումը որոշման	
1.	2.	3.	4.	5.	6.	7.	8.	9.	10.	11.	
1	«ԼԱԴԱ-Ս» ՍՊԸ ք. Ստեփ. Վ. Օվյանի 15	90016598	ՇԻ-002	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				05.12.2018			
2	«ՊԻՐԱՄԻԴԱ» ՍՊԸ ք. Ստեփ. 1-ին Նազորնայա 2	90021418	ՇԻ-579	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				03.12.2018			
3	«Քարավան» ՍՊԸ ԼՂՀ Ասկերանի շրջան գ. Բերքաձոր	90012365	ՇԻ-809	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				21.12.2018			
4	«Հայր և որդի Մուսայեյաններ» ՍՊԸ ք. Մարտունի «Կարվին»	90212356	ՇԻ-852	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>էներգետիկ</i>				20.12.2018			

	տեղամաս								
5	«Շուշիի տեխնոլոգիական համալսարան» Հիմնադրամ ԼՂՀ, ք. Շուշի, Աշոտ Բեկորի 4	90038178	ՔՓՄ-957	Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>հիդրոտեխնիկական</i>				09.12.2018	
6			ՈՏՀ-958	Որակի տեխնիկական հսկողություն, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>էներգետիկ</i>					
7			ՔՓՄ-1006	Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>էներգետիկ</i>				21.12.2018	
8	«ԿՈՆՏԻՆԵՆՏ» ՍՊԸ ք. Ստեփ, Հեքիմյան փողոց, 14ա/19	90035755	ՇԻ-959	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>հիդրոտեխնիկական</i>				09.12.2018	
9	«ՀԱԿԱՐԻ» ՍՊԸ ք. Ստեփ., Կ. Դանիելյան փողոց, տուն 17	90038788	ՇԻ-960	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>հիդրոտեխնիկական</i>				09.12.2018	
10	«Գ Ա Ր ՈՒ Ն» ԱԿ ք. Շուշի, Հեքիմյանի թիվ 1	90341433	ՇԻ-954	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>				18.11.2018	
11			ՇԻ-955	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>հիդրոտեխնիկական</i>					
12	«ԱՐԽԻՏԵԿՏՈՐ» ՍՊԸ ք. Ստեփ. Գ Լուսավորիչ 10/4	90041094	ՔՓՄ-1003	Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>էներգետիկ</i>				14.12.2018	
13	«ԴՂՅԱԿ» ՍՊԸ ք. Շուշի Դազանչեցոց 35	90342247	ՇԻ-468	Շինարարության իրականացում, ըստ հետևյալ ոլորտի՝ <i>բնակելի, հասարակական և արտադրական</i>					28.12.2018 (դիմում առ 25.12.2018)
14	«ԱՎՏՈՐԱՆ» ՍՊԸ ք. Ստեփ. Ա. Հեքիմյանի 8 ^ա /23	90024339	ՔՓՄ-501	Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի՝ տրանսպորտային					28.12.2018 (դիմում առ 26.12.2018)
15			ՈՏՀ-	Որակի տեխնիկական հսկողություն,					

			857	ըստ հետևյալ ոլորտի՝ <i>տրանսպորտային</i>						
16	«Մ Ի Լ Ե Ն Ի ՈՒ Ս» ՍՊԸ ք. Ստեփ., Մ Մաշտոց 6, բն. 12	90013738	ՔՓՄ- 1002	Քաղաքաշինական փաստաթղթերի մշակում, ըստ հետևյալ ոլորտի էներգետիկ						28.12.2018 (դիմում ար 14.12.2018)

